


# Վայոց ձորի մարզպետը մասնակցել է Գլաձոր համայնքում քաղաքացիների սպասարկման գրասենյակի (ՔՄԳ) պաշտոնական բացման արարողությանը

02.05.2019



Մայիսի 2-ին Գլաձոր համայնքում կայացավ քաղաքացիների սպասարկման գրասենյակի (ՔՄԳ) պաշտոնական բացման արարողությունը, որին ՀՀ ՏԿԶ նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանըի հետ մասնակցել է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանը: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ-ում Շվեյցարիայի Համադաշնության արտակարգ և լիազոր դեսպան Ստեֆանո Լազզարոտտոն, ԱՄՆ ՄԶԳ Եվրոպայի և Եվրասիայի բյուրոյի երկրի պատասխանատու Նաթենիել Հոջնաքին, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հայաստանյան գրասենյակի տնօրեն Աննե Քեմփան, Գլաձոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանը, ինչպես նաև համայնքի բնակիչներ:

Գրասենյակը հիմնվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից իրականացվող <Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում> ծրագրի շրջանակում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ և Հայաստանում՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) (մինչև 2018 թ.) համաֆինանսավորմամբ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ համատեղ: Քաղաքացիների սպասարկման գրասենյակի հիմնումը թույլ է տալիս <մեկ պատուհան> սկզբունքով քաղաքացիներին մատուցել բարձրորակ ծառայություններ, բարձրացնել համայնքապետարանի աշխատանքի արդյունավետությունն ու թափանցիկությունը, դյուրացնել համայնքապետարաններում իրականացվող վարչական գործընթացները: Աշխատանքներն իրականացվում են Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) կիրառմամբ, որը որպես ՏԻՄ-երի համար մշակված տեղեկատվական համակարգ՝ թույլ է տալիս ապահովել տեղեկատվական հոսքերի ավտոմատացված կառավարում համայնքապետարանում: Համակարգի միջոցով հնարավոր է բնակիչներին մատուցել առցանց ծառայություններ, հետևել դիմումների և գրությունների ընթացքին, իսկ հարցերի դեպքում՝ առցանց դիմել համապատասխան մասնագետներին: